


Ապա Բաղրատունիները Ուղթիքը ձեռք բերլուց յետոյ, Կիսկիմումն էլ կալուածներ դնեցին:

Հայութիւնը այնքան հալածանքների եւ կոտորածների ենթարկուելուց յետոյ, այնքան բոնի իսլամացումներից յետոյ, վերջին պատերազմի սկզբին դարձեալ քանուչորս Հայ գիւղեր գոյութիւն ունէին: Խոտորջուրի իր եօթն թաղերով, Սպեր-կենդրոնաւան, Կարմրիկ, Վ. եւ Ս. Փրիկեներ, Նիխախ, Կուդրաշէն, Խամբանոր, Կաղմխուտ, Ծետկոնց, Մոխրկուտ Վ. եւ Ս., Կարան, Բաղի, Թորոսինց, Բաղդասարենց եւ Փրտիկներ:

Անհիմական:

ԱՏՐՊԵՏ

(Տարուանակելի):



ՍԱՑԵՆԱԽՈՍԱԿԱՆ

Ըստարձակ Տարեցոյց Ս. Փ. Ազգ. Հիւանդանոցի. Նոր Շքան. Գ. Տարի: Կազմելին Թ. Ազատեան - Մ. Չունածեան: Կ. Պոլիս 1927: Տպագրութիւն Կիւթէնպէրկ: Գին՝ 200 դրուց, արտասահման՝ 1.50 տուար:

Եկտի-Գուլէի Ազգին Տան՝ “Ընդարձակ Տարեցոյցը”, մասնաւորապէս վերջին տարիներուս տեսակ մը ժամագրավայրն հանդիսացած է հայ մաքի ու գրչի լաւագոյն հոյլի մը: Հեռու լոկ Ս. Փրկիչ Հիւանդանոցի նեղ շրջանակին մէջ սահմանափակուած ըլլալէ՝ ան իր 448 էջոց պատկառելի հատորովը համայնապատկեր մը կ'ընծայէ գրեթէ ամբողջ Հայութեան ու զանազան հայ Գաղութներու ներքին կեանքին ու ընթացիկ վկանակի մասին:

Հոն մի առ մի դասաւորուած են մատենագրական, ուսումնասիրական, բանաստեղծական, օրագրական, կենսագրական, բժշկական, օրէնսգիտական, վիճակագրական, տեղագրական եւն եւն բազմապիսի հիւթեղ ու մշակուած յօդուածներ: Իբրեւ օրինակ՝ յիշենք քանի մը հատդուածնենք. Յակոբ Օշական՝ “Մատենագրութեան համար (Պաղար Փարպեցի)”, էջ 29—46. Համաստեղ՝ “Փեսայ Օվան” (էջ 47—52), Յակոբ Մնձուրի՝ “Քոյրը” (էջ 65—69), Տիկ. Հայկանոյշ Մառը՝ “Խենդի սէր” (էջ 72—76), Թ. Աղատեան՝ “Անվերջանալի Տարին” (Եղիա Տէմբրձիպաշեան), էջ 84—92, Հ. Վ. Հացունի՝ “Գնութեան յարկերը Հայաստանի մէջ” (էջ 137

—143), Լութֆիկ Գույումձեան՝ “Ընդհանուր տեսութիւն թուրքիոյ արդի օրէնքներուն վրայ” (էջ 313—322): Տեղագրական բաժնէն՝ Յովակիմ քհյ. Բարսեղեան՝ “Պարսկահայ Գաղութը” (էջ 255—263), “Հայերը Ռումանիոյ մէջ” (էջ 346—355), Ա. Ամրիխանեան՝ “Քալիֆորնիոյ Հայ Գաղութը” (էջ 356—357), “Գանատահայ Գաղութը” (էջ 358—361), “Զուիցերահայ Գաղութը” (էջ 362—366) եւն: Ճոխ է Տարեցոյցին գեղարու եստական մասը, ուր Հանդ Ասատուր կու տայ “Արեւելեան թատրոն”ի 1866—1874 շրջանի պատկերը՝ իր շահեկան ուսումնասիրութիւնը զարդարելով բազմաթիւ հայ գերասան-գերասանուհիներով (էջ 170—215), Ակպիկ՝ “Աղջկան մը” (էջ 216—217), Հրանդ Ալեանաք՝ “Ակարչական նոր հոսանքները” (էջ 219—233), Ա. “Տաղանդաւոր մանրանկարիչ մը” (էջ 238—242), Դկար. Ալահվերտի Որդի՝ “Սիրուր” (բժշկական), էջ 265—268, Դկար. Մ. Գալֆաեան՝ “Հին ու արդի Ատամաբուժութիւնը եւ ժողովուրդը” (էջ 269—273), Դկար. Վ. Թորգոմեան՝ “Ս. Փրկչեան Աղդային Հիւանդանոցի Բժիշկները” (1866—1888), էջ 274—283 եւն:

Առանձին ամփոփ բաժին մը նուիրուած է Փոքր-Ասիոյ ներքին գաւառներու մէջ գտնուող Հայութեան մասին (էջ 337—346): Գունագեղ փունջ մըն ալ հայ ժողովրդական երգերու՝ Մշց (էջ 107 եւ 169), Սեբաստիոյ (էջ 109—111 եւ 168), Ակնայ (էջ 112—114) եւ Վանայ (էջ 167—168) բարբառով՝ սկուած է հոն իրեն առանձնայատուկ հաճելի բոյրը: Համառօտ տեսութիւն մը կը պարզէ Եկտի-Գուլէի Գթութեան Յարկին ներկայ վիճակը (էջ 394—414): Վերջապէս՝ յատուկ բաժին մը կը խօսի անցնող տարուան ընթացքին անհետացող հայ գէմքերու վրայ (էջ 427—437): — Աւելի քան 110 լուսատիպ պատկերներ յօդուածագիր եւ ուրիշ անձերու, տեղերու, շնչերու եւ այլ իրերու կենդանի ու կատարեալ ամբողջութիւն մը կու տան բովանդակ գործին:

Կը մաղթենք որ Ս. Փ. Աղդային Հիւանդանոցը, որ 95 տարիներէ ի վեր ամբողջ Ազգին տաք գուգուրանքին առարկայ եղած է այսուհետեւ ալ ունենայ իր միշտ նախորդ տարիները գերազանցող ստուար ու ճոխ բովանդակութեամբ օժտուած Տարեցոյցները: Հ. Եֆրեմ Պողոսիս անութեան յարկերը Հայաստանի մէջ (էջ 137

